ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

02 նոյեմբերի 2015թ. N 717 -Ն

ք.Ստեփանակերտ

«ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ «ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետին, 20-րդ հոդվածին, 67-րդ հոդվածի 1-ին, 68-րդ հոդվածի 7-րդ կետերին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Վերակազմակերպել «Մարտակերտի ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությունը՝ «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությանը միացնելու ձևով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված փակ բաժնետիրական ընկերությունների միացման պայմանագրի և փոխանցման ակտի կազմման ու հաստատման աշխատանքների կատարումը, դրան համապատասխան հաստատել «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի նոր չափը և «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել համապատասխան փոփոխություններ.

2) «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխության և գույքային իրավունքների ու «Մարտակերտի ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության գործունեության դադարեցման պետական գրանցման աշխատանքները՝ «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**